Հետազոտական աշխատանք

Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Հետազոտական թեմա՝ Համագործակցային կարողությունների զարգացումը <<Գործնական և դերային խաղեր>>, <<Խմբավորում>>, << Մտածիր, զուգորդիր, մտքերի փոխանակում>> մեթոդների միջոցով. անգլերենի 3-րդ դասարանի օրինակը:
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Անի Աբրահամյան Արամայիսի մանկավարժ անգլերեն 3,4,6,7,8,9,10

Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Աբովյանի կրթահամալիր ՊՈԱԿ Ք. Աբովյան ուսանողական 3 (0222) 21467 abovyanedu@mail.ru

Բովանդակություն (1 էջ)

1. Ներածություն……..3
2. Ուսուցչի դերը համագործակցային ուսուցում իրականացնելիս……5
3. Համագործակցային ուսուցումը զույգերով , փոքր խմբերով……7
4. Համագործակցային ուսուցում իրականացնելիս խմբերի ձևավորումը…..8
5. Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ և հնարներ……10
6. 'Գործնական և դերային խաղ', ' Մտածիր ,զուգորդիր, համադրիր' , 'Խմբավորիր' մեթոդների արդյունավետությունը 3-րդ դասարանում ` փոքրիկ խմբերով աշխատելիս……..12
7. 'Գործնական և դերային խաղ', ' Մտածիր ,զուգորդիր, համադրիր' , 'Խմբավորիր' մեթոդների դրական և բացասական կողմերը……14
8. Եզրակացություն……

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Որքանո՞վ են <<Գործնական և դերային խաղեր>>, <<Խմբավորում>>, << Մտածիր, զուգորդիր, մտքերի փոխանակում>> խմբային մեթոդները նպաստում անգլերենի դասավանդման գործընթացում 3 -րդ դասարան աշակերտների համագործակցային կարողությունների զարգացմանը
Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	համագործակցային կարողությունների զարգացումը, որը կնպաստի ուսուցման արդյունավոտության բարձրացմանը
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Սովորել սովորելու կարողունակություն Լեզվական գրագիտություն և կարողունակություն Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Առարկայի դասավանդման մեթոդիկա

Պարագրաֆներ/մասեր

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	**Ուսուցչի դերը համագործակցային ուսուցում իրականացնելիս** Շատ ուսուցիչներ են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքներ, բայց քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Համագործակցային մեթոդները ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար, հանդուրժող, ըմբռնող, ուղղորդող՝ հատկապես տարրական դասարաններում: Խմբեր ձևավորելիս պետք է լինել շատ զգուշավոր և համբերատար, քանի որ կարող է առաջանալ էմոցիոնալ իրավիճակներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխաները կարող են ստրեսային, խուճապային իրավիճակում հայտնվել, ինչը միանգամայն դրական ազդեցություն չի կարող թողնել ուսումնական գործընթացի վրա: Խմբային աշխատանք իրականացնելիս կարևոր է, որ ուսուցիչը միտքը ձևակերպի պարզ , երեխանեչին մատչելի, ըմբռնելի բառապաշարով, տա հստակ օրինակ և ճշտի՝ արդյոք երեխաները ճիշտ են հասկացել

	հանձնարարությունը: Կարևոր է նաև աշխատանքի ընթացքում աննկատ անցնել խմբերի միջով և պարզել՝ իսկապես ամեն ինչ ճիշտ է ընկալվել, թե մի փոքր ուղղորդման կարիք կա: Տարրական դասարաններում համագործակցային ուսուցում իրականացնելիս շատ կարևոր է հաշվի առնել ևս մեկ հանգամանք. Այս տարիքում երեխաների մոտ դեռ չի ձևավորվել սեփական գիտելիքները և կարողությունները գնահատելու հմտությունը, դա անգամ դժվառությամբ են կատարում բարձր տարիքի սովորողները, ուստի երեխաները կարող են թերագնահատել կամ գերագնահատել իրենց դերը այդ աշխատանքի կատարման գործընթացում, ինչը բնականաբար, արդյունավետ չի լինի: Նմանատիպ իրավիչակից խուսափելու համար անհրաժեշտ է դասվարից տեղեկանալ յուրաքանչյուր աշակերտի կարողունակություններից համապատասխան թեմայի շրջանակներում, այնուհետև կատարել դերաբաշխում խմբի ներսում: Բարձր դասարաններում նմանատիխպ խնդիրներ չեն ծագում, քանի որ իրենք կարողանում են արագ կողմնարոշվել և անցնել աշխատանքի արդյունավետ կատարմանը: Դերաբաշխումը խմբի ներսում կարող է կատարվել հետևյալկ կերպ՝

- Մեկը, ով կարձանագրի որոշումները /գրագիր/
- Մեկը, ով կկարողանա վարժ կարդալ նյութը / ընթերցող/
- Մեկը, ով կկարողանա ձևավորել պաստառը,կամ թուղթը / նկարող/
- Մեկը, ով կվերահսկի ժամանակը և աշխատանքի հնարավորինս հավասարաչափ կատարումը/ հսկող/
- Մեկը, ով կհամախմբի և կհամադրի կարծիքները, կվերլուծի և կտա լուծումներ վերլուծող
- Մեկը, ով կներկայացնի աշխատանքը ընկերներին՝ մյուս խմբերին/ ներկայացնող/:

Դերաբաշխումը կարող է փոփոխության ենթարկվել՝ ուսումնասիրվող նյութին զուգընթաց:

Ուսուցիչը համագործակցային ուսուցում իրականացնելիս պետք է մասնակցություն ունենա գործընթացին, վերահսկի խմբի անդամների մասնակցությունը, քանի որ աշխատանքի բուն նպատակն է աշխատել միասին և բոլորով, կարևոր է, որ պասիվ աշակերտ խմբում չլինի և բոլորը ներառված լինեն ուսուցման գործընթացի մեջ:: Այս տարիքանին սովորողների մոտ շատ նկատելի է լիդերությունը, ինչը սխալ է

ընկալվում նրանց մոտ դեռ վաղ տարիքից, քանի որ լիդեր ասելով նրանք հասկանում են 'իշխող',' հրամայող' և կարող են նեղացնել միմյանց՝ ճիշտ համարել միայն իրենց կարծիքը, ինչը անթույլատրելի է համագործակցային ուսուցում իրականացնելիս: Խմբում պետք է գործի **'Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի'** կարգախոսը: Շատ կարևոր է խմբում պահպանել դրական մթնոլորտ, որտեղ մեկը մյուսին սովորեցնում է:

Համագործակցային ուսուցումը զույգերով, փոքր խմբերով

Հաջողված խմբային աշխատանք իրականացնելու նախապայմաններից մեկն այն է, որ նախքան խմբերով աշխատելը սովորողներին պետք է սովորեցնել աշխատել զույգերով:

Առաջինը, որ պետք է սովորեցնել՝ միմյանց լսելն է ու ստուգելը: Սա շատ կարևոր հմտություն է, որին պետք է վաղ տարիքից տիրապետել:

Հաջորդիվ պետք է սովորեցնել քննարկել միմյանց հետ նյութը և հարգել միմյանց կարծիքը:

Այնուհետև վերլուծել և գտնել լուծումներ:

Իր զույգի մեջ երեխան պետք է տեսնի հուսալի ընկերոջ, այլ ոչ թե մրցակցի, ումից կկաշկանդվի և չի կարողանա առավելագույնս բացահայտի իր գիտելիքները: Վստահության, դրական մթնոլորտը

	կարևորագույնն է զույգերով աշխատելիս: Պետք է այնպես ոգեշնչել սովորողիներին, որ նրանք միմյանց ընդունեն որպես ուսուցիչ համահավասար: Նրանց մեջ պետք է ներշնչել **'մենք ուժեղ ենք միասին'** ոգևորող կարգախոսը**:** Զույգերով աշխատանքը հաջողությամբ իրականացնելուց և դրական արդյունքներ արձանագրելուց հետո, վստահաբար կարող ենք իրականացնել խմբային աշխատանք, որի հաջողությունը ևս ակնհատ կլինի: Խմբային աշխատանքի կարևորագույն մասերց է նաև <u>կանոնների</u> մշակումը աշակերտների հետ միասին և դրանց պահպանումը: Աշխատանքային աղմուկը բնական է, բայց այն պետք է կառավարվի և չվերածվի քաոսի: Չափից շատ աղմուկի դեպքում սովորողները կենտրոնանալ կդժվարանան և ուսուցումը կկորցնի իր արդյունավետությունը: Գնահատման ձևը, սանդղակը ցանկալի է կազմվի աշակերտների հետ միասին, այս պարագայում նրանք ավելի պատասխանատվությամբ և ոգևորությամբ են կատարում հանձնարարությունները: **Համագործակցային ուսուցում իրականացնելիս խմբերի ձևավորումը:** Համագործակցային ուսուցում իրականացնելիս կարևորագույն քայլերից մեկն է խմբերի ձևավորումը: Քանի որ մենք գործ ունենք տարրական դասարանցիների հետ, ապա պետք է հաշվի առնել զանազան

	հանգամանքներ՝ հոգեբանական համատեղելիություն, ցանկություն, պոտենցիալ հնարավորություններ, ցանկացած մանրուք, ինչը կնպաստի երեխաների հարմարավետ աշխատանքին: Խմբի ձևավորումը կախված է նաև դասի նպատակից և խնդիրներից: Պետք է դնել իրատեսական հանձնարարություններ: Մշակել հստակ կանոններ և հետևել, որ երեխաները պատասխանատվությամբ հետևեն դրանց: Խմբերը ձևավորելիս կարող ենք առաջնորդվել այնպիսի մեթոդներով, ինչպիսիք են՝ • Ըստ ցանկության • Պատահականության սկզբունքով • Հաշվելով • Որոշակի հիմքի վրա • Լիդերի ընտրությամբ • Վիճակահանությամբ և այլն: Յուրաքանչյուր մեթոդ ունի իր դրական և բացասական կողմերը: Դրական կողմերից մեկն այն է, որ կարող են նույն խմբի մեջ ընդգրկվել երեխաներ, ովքեր գրեթե չեն շփվում դասարանում կամ ունեն կոնֆլիկտային հարաբերություններ: Մեկ թիմում ընդգրկվելիս նրանք ստիպված են համագործակցել ընդհանուր շահի համար,

	որը կարող է խթանել նրանց հետագա շփմանը: Բացասական կողմերից մեկն այն է, որ դա առաջացնում է հուզական տրամադրություն, երեխաները դժվարությամբ են հաշտվում իրավիճակի հետ, և պահանջվում է ժամանակ մինչև նման երեխաները կներգրավվեն գործընթացին: Շատ կարևոր է, որ այստեղ ուսուցիչը ճիշտ մոտեցում ցուցաբերի և մեղմացնի լարված իրավիչակը; Խմբերի ձևավորումից հետո, ինչպես արդեն վերը նշել եմ /ուսուցչի դերը համագործակցային ուսուցում իրականացնելիս/ ցանկալի է կատարել դերաբաշխում՝ ըստ երեխաների կարողությունների և հմտությունների, ինչպես նաև ըստ դասի պահանջներից: Խմբերի ձևավոևումից, դերաբաշխումից հետո անցնում ենք կանոնների մշակմանը՝ միաժամանակ մշակելով գնահատման սանդղակը: Կանոնները հետևյալն են՝ ● Հարգել բոլարի տեսակետը ● Համոզվել, որ բոլարը կատարում են իրենց հանձնարարությունը ● Խոսել պարզ, հասկանալի և ցածրաձայն ● Խոսել միայն թեմայի շրջանակում

	• Համբերատար լինել, չվիճել • Իրար դիմել անունով • Հետևել ժամանակին և ավարտել աշխատանքը հրահանգը լսելուն պես Խմբային աշխատանքն անցնում է հետևյալ փուլերով՝ • Դնել հատակ խնդիր • Խնդրի կատարման համար քայլեր նշել • Տալ դիդակտիկ նյութեր • Ծանոթանալ նյութի հետ և պլանավորել աշխատանքը • Կատարել դերաբաշխում • Հետևել գործընթացին • ներկայացնել աշխատանքներ • գնահատել • անդրադարձ • Խմբային աշխատանքը ավարտելուց, վերլուծելուց հետո, երբ կատարբել է նաև գնահատումը անհրաժեշտ է անդրադարձ՝ ռեֆլեքսի: Կան տարբեր մեթոդներ, որոնք կարող ենք կիրառել . օրինակ՝

- Ես շատ լավ հասկացա…..
- Ինձ հետաքրքիր էր…
- Ինձ հասկանալի էր, բայց հետաքրքիր չէր …
- Ես այդքան էլ լավ չհասկացա
- Ես ոչինչ էլ չհասկացա

Մեկ այլ մեթոդ

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ և հնարներ

Ցանկացած նյութ ուսումնասիրելիս կարևոր նախապայման է հիմնախնդիրների վերհանումը: Պետք է հստակ իմանալ՝

Ի՞նչ սովորեցնել

Ինչու՞ սովորեցնել

Ինչպե՞ս սովորեցնել

Այս հարցերին պատասխանելիս առաջ են գալիս մի շարք ենթահարցեր, որոնք ուղղված են ուսուցման գործընթացը մատչելի, դյուրըմբռնելի, հասանելի դարձնելուն: Այն երեխաների մոտ պետք է առաջացնի սեր դեպի ուսումը, դեպի գիտելիքը:

Մանկավարժները մտածել և կիրառել են զանազան մեթոդներ, որոնք տվել են իրենց դրական արդյունքը ՝

Կախված ուսուցչի հմտություններից մեթոդները կարող են լինել զանազան, որոնք անգամ անվանումներ չեն ստացել դեռ,

սակայն արդյունավետ են նյութի մատուցման և ընկալման գործընթացում:



Ահա այսպիսի պատկեր ենք ստանում համագործակցային ուսուցում իրականացնելիս, ինչը միանշանակ տալիս է իր դրական արդյունքը, եթե ամեն ինչ կազմակերպվում է ճիշտ, և ունի հստակ դրված նպատակ:

Դասավանդման մեթոդներից և հնարներից կարելի է անվերջ խոսել, բայց ես փորձեցի գործնականում կիրառել 'գործնական և դերային խաղերը':

Մեթոդն ուսումնասիրելիս հասկացա, որ կարող եմ նաև կիրառել ևս մի քանի հնարներ և մեթոդներ , որոնք միմյանց հետ շաղկապված են:

'Գործնական և դերային խաղ', 'Մտածիր, զուգորդիր, համադրիր', 'Խմբավորիր' մեթոդների արդյունավետությունը 3-րդ դասարանում ՝ փոքրիկ խմբերով աշխատելիս Ուսումնասիրելով համագործակցային ուսուցման արդյունավետությունը ուսուցման գործընթացում, գիտակցելով ուսուցչի կարողունակությունների զարգացման

անհրաժեշտությունը համագործակցային ուսուցում իրականացնելիս, արժևորելով երեխաների սերտ համագործակցության դերն ու նշանակությունը արդի զարգացող աշխարհում՝ ես ցանկացա իմ հետազոտությունը իրականացնել հենց տարրական դասարանում սովորողների հետ, քանի որ մանկուց պետք է երեխան արժևորի մարդուն և իրեն շրջապատող աշխարհը : Այս աշխարհում յուրաքանչյուրս ունի իր ուրույն դերը աշխարհկառուցման, զարգացման գործընթացում: Միտքս կանգ առավ ՝ դերային խաղեր՝ մեթոդի վրա, փոքր տարիքի երեխաները միշտ են դերախաղի մեջ իրենց սիրելի մուլտֆիլմի հերոսներին կերտելիսշ: Բայց այլ բան է դերի մեջ մտնել, երբ ունկընդիրդ հարազատ մարդիկ են և այստեղ գրեթե չկա պատասխանատվություն, մեկ այլ բան է ,երբ ընկերներիդ դատող հայացքի ներքո պետք է կարողանաս կենտրոնանալ, ըմբռնել դերդ և ներկայացնել հավուր պատշաճի:

Ընտրությունս կանգ առավ երրորդ դասարանցիների վրա: Տառուսուցումից հետո, անցում ենք կատարում քերականությանը, ուստի TO BE բայը ուսումասիրելուց հետո որոշեցի հարցակն , ժխտական նախադասություններ կազմելը և TO BE –ի բայի կիրառման ոլորտները բացատրելը կազմակերպել խմբային աշխատանքի միջոցով, որտեղ էլ կկիրառեմ ՝

	գործնական և դերային խաղեր՝ մեթոդը: Մինչ կազմակերպչական մասին անցնելը, խոսեցի դասվարի հետ՝ ճշտելու, թե արդյոք երեխաները կարող են իրենց առաջ դրված մարտահրավերները հաղթահարել, և ունեն փորձ այս մեթոդի շրջանակներում: Դասվարից ստանալով դրական պատասխան՝ անցա թեմայի մշակմանը : Թեմայի մշակման ընթացքում պարզեցի, որ հանձնարարությունները մշակելիս կարող եմ օգտագործել ևս մի քանի մեթոդ՝ 'Մտածիր ,զուգորդիր, համադրիր' և ' խմբավորիր', իսկ խմբերի բաժանումը կատարեցինք նախապես դասվարի օգնությամբ, որպեսզի պահպանոնք կարողունակությունների հավասար դրսևորումը աշխատանքների ժամանակ :Դերախաղը ունի իր կանոները, ուստի պետք էր ուսումնասիրել մի քանի դրույթնոր՞ • որոնք են դերախաղի նպատակն ու խնդիրները • որոնք են դերախաղի ընդհանուր կանոնները • որոնք են դերախաղի փուլերը • որոնք են դերախաղի դրական և բացասական կողմերը • ինչպես իրականացնել գնահատում

Դերախաղերը կարող են լինել **հանպատրաստի** և **նախապատրստված**: Իմ պարագայում նախընտրելի էր **հանպատրաստի** դերախաղը, քանի որ կյանքը նախապես պլանավորել հնարավոր չէ և մենք միշտ բախվում ենք այնպիսի իրավիճակների, երբ պետք է լինում արագ արձագանքել ստեղծված իրավիճակին: Դերախաղի ժամանակ պետք է մթնոլորտը լինի դրական և երեխաները զգան ազատ, իսկ այս գործում մեծ է ուսուցչի ներդրումը, ուսուցիչը իրեն ևս պետք է ազատի ավելորդ լարվածությունից, լինի համոզիչ և դրական լիցքերով ինքնավստահություն ներշնչի աշակերտներին: Լարված մթնոլորտում դերախաղ կազմակերպելն արդյունավետ չէ: Դերախաղն իրականացնելիս անցնում ենք հետևյալ փուլերով՝

- նախապատրաստում
- բուն խաղ
- անդրադարձ

‘Գործնական և դերային խաղ’, ‘ Մտածիր ,զուգորդիր, համադրիր’ , ‘Խմբավորիր’ մեթոդների դրական և բացասական կողմերը

Ինչպես յուրաքանչյուր ուսուցման մեթոդ դերախաղը ևս ունի իր դրական և բացասական կողմերը և մի շարք խնդիրներ, որոնք ուսուցիչը պետք է հանգուցալուծի:

Խնդիրներից մեկն այն էր, որ պասիվ երեխաները վախենում են մասնակցել և հաճախ հրաժարվում են, նրանց համզել մի փոքր դժվար է և համբերատարություն է պետք: Ինչ վերաբերվում է ակտիվ երեխաներին, նրանց մոտ էլ առաջանում է բախում դերը ստանձնելու հարցում: Դրականն այն , որ թե ակտիվ, թե պասիվ երեխանները հետաքրքրված են և հաճույքով ունկնդրում են և սովորում իրենց ընկերներից: Եթե անգամ բարդույթավորված երեխան հրաժարվի մասնակցություն ցուցաբերել այս անգամ, ապա չի բացռվում, որ ոգեշնչվելով ընկերներից նա իր մեջ բացահայտի իր դերասանական հմտությունը և մյուս անգամ պատրաստակամ լինի մասնակկցություն ցուցաբերելԳնահատումը ևս կարևոր գործընթաց է , որի սանդղակը պետք է մշակել և ներկայացնել աշակերտներին, օրինակ՝

ԽՈՒՄԲ
Պարզ, հասկանալի խոսք
Անկաշկանդ խաղ
Արագ և ճիշտ պատասխաններ
Հանձնարարությունների անթերի կատարում
Խմբի կողմից բոլոր սահմանված կանոններ պահպանում
Աշխատանքի հավասար կատարում խմբի բոլոր անդամների կողմից

	Դերախաղին պատրասվելիս փորձեցի ապահովել միչառարկայական կապը բնագիտության, աշխարհագրության, ռուսերենի, տեղնալոգւայի հետ, ինչն էլ ավելի արդյունավոտ դարձրեց ուսուցման գործընթացը: Գնահատման այս սանդղակին աշակերտներս ծանոթ էին, բայց դասարանում ես՝ աղյուսակի փոխարեն օգտագործոցի մի հնար, որն էլ ավելի հետաքրքրեց և ոգևորեց նրանց: Յուրաքանչյուր խմբին տրամադրեցի A 4 ֆորմատի թղթի վրա պատկերված մի ծառ (ծառերը տարբեր էին ՝ կեչի, սոճի և բարդի), միավորային գնահատման փոխարեն, միավոր վաստակելիս ես նրանց տալիս էի տերևներ՝ ծառերին համապատասխան / այսպես նրանք սովորեցին զանազանել այս երեք ծառերը ՝ըստ տերևների). մեկ միավոր՝ մեկ տերև: Հանձնարարությունը կազմեցի այնպես, որ հնարավոր լինի կիրառել ընտրածս մեթոդները հաջորդաբար:: օգնությամբ դասարանը բաժանել էինք 3 խմբի, Արդյունքնորի ամփոփման համար, գրատախտակին փակցրեցինք ծառերը, որոնց ներքևի հատվածը տվյալ խմբի գույնով էր ներկված, իսկ տերևները ինձ մոտ էին և հանձնարարությունը կատարելուց հետո որպես միավոր մասնակիցները ստանալու էին տերևներ և ձևավորեին իրենց ծառը: Ըստ

	տերևների քանակի ՝ կպարզեինք առաջատարին: Հիմնական շեշտը դրված էր TO BE բայի կիրառման ոլորտների վրա՝ Ծանոթությունն Զգացմունքնոր Մասնագիտություն Իրավիճակների նկարագրություն և այլն Իսկ վերջում փոքրիկ թեստ, որից հասկանալի կլիներ նրանց կուտակած գիտելիքների պաշարը:Դասի ընթացքը մանրամասն նկարագրված է հավելված բաժնում:
Օգտագործված մեթոդները, գործիքները	Էլեկտրոնային գրատախտակ Զանազան դիդակտիկ նյութեր Քարտեր, հարցաթերթիկներ սահիկներ
Իրականացման ժամանակահատվածը	2022-2 023 ուստա րի
Թիրախ խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	3-րդ դասարան 17 աշակերտ 3 տղա, 14 աղջիկ

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտությանս արդյունքում պարզեցր, որ գերազանց սովորող երեխան անծանոթ հայացքների ներքո շփոթվում է, չի կարողանում մտքերը հավաքել և արտահայտվել: Այս խնդիրը ակնհայտ երևում է դասալսումների ժամանակ , երբ երեխաները դժվարանում են կենտրոնանալ, հաղթահարել վախը, ամոթը և տպավորություն է ստեղծվում, որ նրանք չեն տիրապետում նյութին, այն ինչ խնդիրը ավելի խորքային է և հուզական: Այս արգելքները հաղթահարելուց հետո միայն հնարավոր կլինի ստուգել սովորողի իրական իմացական պաշարները, և ուսուցումը կազմակերպել արդյունավետ: Շատ հաճախ եմ լսել երեխաներից ՝ չեմ կարող, չգիտեմ՝ այնինչ նրանք կորող ուժեր են և շատ ավելին գիտեն, քան պատկերացնում են, ուստի մեր առաջ կանգնած մարտահրավերներից կարևորագույնն է երեխաներին ներշնչել , որ նրանք ամեն ինչ կարող են, պարզապես յուրաքանչյուրից պահանջվելու է տարբեր ժամանակ, նույն խնդիրը յուրացնելու, ըմբռնելու համար: Կիրառելով այս 3 մեթոդները ՝ հասկացա, որ նրանք իսկապես արդյունավետ են:

Նախ երեխաները շփվում էին միմյանց հետ, ջանք ու եռանդ էին ներդնում հանձնարարությունները կատարելու մեջ, այնպիսի մթնոլորտ էր տիրում դասարանում, որ գեթ մեկ րոպե հնարավոր չէր ձանձրանալ: Երկրորդ՝ նրանք փորձեցին հաղթահարել ինքնաարտահայտման բարդույթը:

Դիտարկելով այս մեթոդի աղդեցությունը թե երեխաների, թե դասալսողների վրա հասկացա, որ մենք կարող ենք ուսուցման բարդ գորխընթացը վերածել դյուրմբռնելի, հետաքրքիր գործընթացի: Բացասական կողմն էլ այն է, որ նմանատիպ դասեր կազմակերպելիս, ուսուցչից շատ ժամանակ է պահանջվում դիդակտիկ նյութեր պատրաստել, սահիկներ և այլ կազմակերպչական հարցեր: Հետազոտության արդյունքում պարզեցի, որ արդի աշխարհում ՏՀՏ գիտելիքների տիրապետելը ավելի հաճելի և դյուրին է դարձնում նյութի մատուցումն ու ընկալումը, և օգնում է,որ ժամանակակից սովորողը ներգրավել կրթության մեջ: Ցանկացած դաս, ցանկացած մեթոդ դառնում է էլ ավելի գրավիչ:

'Գործնական աշխատանք և դերախաղեր' մեթոդի ուսուցանելի մասն այն է, որ երեխաները հետաքրքրությամբ լսում են միմյանց, զարգացնում ենք մի շարք

	կարողունակություններ՝ **լեզվական** (օգտագործում են օտար լեզու ՝ գրավոր, բանավոր), **սովորել- սովորեցնել** (ուշադիր լսում են միմյանց, երբեմն էլ կրկնում, ուղղում), **ինքնաճանաչողական** (երեխաները բացահայտում են իրենց թե դրահան և թե բացասական կողմերը իրենց ընկերների հետ համագործակցելիս, **ժողովրդավարական և քաղաքացիական** (պատասխանատվության զգացողություն ենք ձևավորում շրջապատի հանդեպ), **թվային և մեդիա** , **մշակութային** (այօր ուսուցիչը ավելի շատ պետք է ուղղորդի, քան սովորեցնի, քանի որ համացանցը այսօր արդեն ստանձնել է սովորեցնողի դերը՝ իր դրական և բացասական դրսևորումներով): Այսպիսով՝ TO BE OR NOT TO BE (Լինել ,թե ոլինել) THAT IS QUESTION (Սա է հարցը) Պատասխան՝ Այո, լինել: Լինել 21-րդ դարի պահանջներին համապատասխան ուսուցչուհի և ներդրում ունենալ սերունդների կրթման պատասխանատու գործընթացում:

Այլ տեղեկատվություն	

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	

HE

Check up
YOU

SITUATION 2

YOU
AM
I
HE

SITUATION 2



Նախքան դասին անցնելը միասին կոտրեցինք լարվածության սառույցը կատարելով լեզվական վարժությունը՝ աստիճանաբար արագացնելով տեմպը:
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 1
Կիրառում եմ ՝ Մտածիր, զուգորդիր, համադրիր՝ մեթոդը:
Սսեղաններին դրված են 3 թերթ,որոնցից երկուսի վրա դերանուններն են (I, YOU, HE, SHE, IT, WE, YOU, THEY) , մեկի վրա օժանդակ բայեր (AM, IS, ARE), վերցնում են այդ թերթերը և մոտենում եք գրատախտակին, համագործակցելով, համադրելով միմյանց հետ կազմում են զույգեր ՝ նախադասություն, որից հետա այդ նախադասությունը դարձնում եք հարցական և ժխտական: (բացատրված է հնարավորինս մատչելի):
Հանձնարարության համար տրվունմ է 5 րոպե: Յուրաքանչյուր խմբից մասնակցում

	էր 3 սովորող: Հանձնարարությունը կատարվեց ժամանակին և այստեղ կարևորեցի այն փաստը, որ համագործակցությունը տեղի ունեցավ միջխմբային ՝ 3 խմբերի անդամներն ասես ձևավորեցին մի ուրիշ 4-րդ խումբ և բոլորը վաստակեցին իրենց առաջին միավորները: (նկարները տես հավելվածում) ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2 Կիրառում եմ ՝գործնական աշխատանք և դերային խաղեր ՝ մեթոդը: Յուրաքանչյուր խմբից մոտենում են 2 մասնակից, իմ սեղանին դրված են դրոշներ, (երեխաները ծանոթաան 6 երկրի դրոշների հետ: Նկարներտ տես հավելվածում), որոնց տակ գրված է ծանոթության տեքստ: Նրանք զբոսաշրջիկներ են տարբեր երկրներից և պետք է ծանոթանան միմյանց հետ և ներկայացնեն երկիրը: Օրինակ՝ I am Ann. I am from Armenia. Մյուսները հաստատում են She is Ann, she is from Armenia . Նախապես միասին կրկնեցինք երկրների անվանումները մի քանի անգամ, որից հետո տրվեց ժամանկ: Հանձնարանության համար տրվեց 5 րոպե: ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 3 Կիրառում եմ ՝ խմբավորիր ՝ մեթոդը: Այստեղ երեխաները պետք է խմբավորեին զգացմունքները: Էկրանին հայտնվեցին SMILE-ներ , իսկ զուգահեռ

	թարգմանություններ, մի փոքր մտածելուց հետո կռահեցին բոլոր զգացմունքները Հանձնարարությունը հետևյալն էր՝ -Ձեր սեղաններին տեսնում եք զգացմունքներով պատկերներ,յուրաքանչյուր սեղանին 2 պատկեր, դիմախաղի միփոցով,առանց բառի ցույց տվեք այդ զգացմունքը: Հանձնարաությունը կատարեցին 5 րոպեում: ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 4 Հանձնարարությունը հետևյալն էր՝ 1. Տեղադրել TO BE բայի համապատասխան ձևերը՝ (AM, IS, ARE) 2. Թարգմանել նախադասությունները : Վերջին հանձնարարությունը երեխաները կատարում էին ավելի պատասխանատվությամբ և ներգրավված, ասես յուրաքանչյուրին էր հետաքրքիր ստուգել իր գիտելիքը , հասկացածը : Կար քննարկում և համագործակցում , աշխույժ աշխատանքային աղմուկ, որը վերահսկելի էր, կար հետաքրքրություն: Ժամանակը լրանալուն պես, աշխատանքը ավարտվեց և թերթիկները հանձնեցին ստուգման: Մինչ ես իրենց գրածն էի աչքի անցկցնում , էկրանին հայտնվեց իրենց կատարած վարժությունների ճիշտ պատասխանները և երեխաները կարողացան կատարել ինքնաստուգում:

	Արդյունքները ամփոթվեց ՝ միասին հաշվեցինք յուրաքանչյուր ծառին փակցրած տերևները՝ հաշվեցինք անգլերենով ՝միաժամանակ կրկնելով թվերը և պարզեցինք ավելի շատ միավոր հավաքած թիմին: Դասն ավարտեցինք հետադարձ կապով՝ օգտագործելով ՝3,2,1՝ մեթոդը: Հաջորդ դասին փորձեցի պարզել թէ ինչից դժվարացան, ինչը կցանկանային հաճախակի օգտագործել, ինչը չհավանեցին և այլն: Մեծամասնությունը հավանել էր սահիկները, իսկ դժգոհեցին միմյանցից, նրանք նշեցին ,որ իրար կարծիք չէին լսում, պատասխանլիս կամ դանդաղում էին, կամ սխալներ էին թույլ տալիս: խնդրեցին որ մեր դասերը այսուհետ այդպիսին լինի: Ամփափելո հետազոտությունը՝ ուզում եմ մեջբերել մի չինական ասացվածք. ՝Ասա ինձ, և ես կիմանամ, Ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, Թույլ տուր ինքս անեմ, և դա կլինի իմը հավետ՝:

Հարցաթերթ

Մասնակիցներ՝ **17** աշակերտ

հարց	այո	ոչ	չգիտեմ
Հետաքրքիր էր արդյո՞ք դասը	+		

Կցանկանայի՞ք դասերը խմբային աշխատանքով անցկացնեինք	+		
Բոլորը մասնակցեցի՞ն աշխատանքին	+		
Դասը հասկանալի՞ էր, հեշտությամբ ընկալեցի՞ք նյութը	+		
Բարդ էին արդյո՞ք հանձնարարությունները		+	
Ի՞նչը կցանկանայիք փոխել հարցին ՝ պատասխանեցին		Տանը սովորեին խոսքերը՝ երկխոսությունը	

Օգտագործված գրականության ցանկ (1-2 էջ)

Համացանց
https://forum.armedu.am/forum/%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF/%D5%B4%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A1%D5%A3%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D5%BF%D5%A1%D6%80%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81/151875-%D5%AD%D5%B4%D5%A2%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A4%D5%A5%D6%80%D5%A8-%D5%BF%D5%A1%D6%80%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4